Անիի ջահը ձևավոր պղնձի թերթերից է շինված, որի շրջանակաձև կախիկների մեջ հագցվել են ապակե մեծ և փոքր անոթաձև կանթեղներ։ Այդ կանթեղների մեջ ձեթ է լցվել և պատրույգով վառվել[1]։

Սանահնի ջահերը նվիրելու վերաբերյալ հրովարտակը թվական չունի, բայց ժամանակի տեսակետով սա ավելի հին է, քան Անիի ջահը, որովհետև Գուրգենը թագավորել է մինչև 989 թվականը, իսկ Անիի ջահը 11-րդ դարի գործ է։

Քանի որ այդ արքայանվեր ջահերն անհետ կորած են, ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել նրանց նվիրման հրովարտակը։

«Կամաւն ամենազաւրին Աստուծոյ ես՝ Գուրգէն թագաւոր, շահնշահի որդի Աշոտոյ Ողորմածի, ազգէ Բագրատունի. յիշե[ա]լ զմեղս իմ և առաջի մտաց իմոց ունելով զահեղ դատաստանին, և ետու առնել ի հալալ գոյից իմոց ջահ մի՝ ունելով յինքեան կանթեղս ճ և երկոտասան, զի որպես հոլովեւով արեգակն ի ծիրանոյ յերկնից և զդէմս ի յերկիր ունելով և պայծառացուցանելով զսայ ըստ նմին աւրինակի և ջահս այս ճախր առեալ ի գմբէթ կաթուղիկէիս և ոչ զդէմս ի վայր դարձուցանելով և կամ հեղլով զձեթն, այլ ի պայծառութիւն և ի լուսաւորութիւն սուրբ կաթուղիկէիս։

Եւ ապա չափաւոր ջահ մի այլ, անուն սրբոյ քառասնիցն. ունելով յինքեանս կանթեղս ըստ թվոյ նոցա։ Եւ արդ, բերելով զնմանութիւն լուսնի, զի որպէս լուսինն ի գիշերի ծագէ և խոնաւ ճառագայթիւք իւրովք հասուցանէ զպտուղ երկրի, նաև ուղղեկցութիւն ճանապարհորդացն, այլև ի մխիթարութիւն այնոցիք, որ թիավարեն ի վերա ամեհի ալեաց ծովուն, այսպիսի աւրինակաւ ջահս այս պայծառացուցանէ զաւրթ զսուրբ Աստուածածնիս և զսուրբ կաթուղիկէիս Սանահնոյ ի ծնաւղաց իմոց, գերեզմանատանս Բագրատունեաց, որ են տեղի հասուն և կատարեալ առնելով զպտուղ հոգւոյն այլ և ճանապարհ արարան ի վերին կայեանս և շաւիղ որ անցուցանէ ընդ(հ)որդահոսան բռնութեան ալեկոծութեան գեհենին։ Եւ արդ սոքա որ վառեալ բորբոքին ի տանէ տէրունականաց և յիշատակ ի սրբոց մարտիրոսաց, մինն ի տրլընջեան,



Նկ. 22. Խաչքար Սանահին գյուղում։

ի ժամ սոսկալի պատարագին և միւսն ի մէջ գիշերի, ի լուսաւորութիւն սրբոցս և ի պայծառութիւն մանկանց նոր սիրվնի և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն»[2]։

Այս հրովարտակը մեզ համար մեծ կարևորություն ունի նաև այն պատճառով, որ նրա մեջ խոսվում է գավթի գոյության մասին դեռևս Գուրգեն առաջինի ժամանակ, 10-րդ դարի 80-ական թվականներին։

Թե ի՞նչ ճարտարապետություն է ունեցել այդ գավիթը, գուցե որոշ չափով պարզվի,

[1] Անիի ջահը, Հովսեփ Օրբելու հաշվումների համաձայն, ունեցել է ընդամենը 117 մեծ և փոքր կանթեղներ։
Տե՛ս Каталог Анийского Музея древностей, вып. I, составил И. Орбели, СПБ, 1910, стр. 43.

[2] Սանահնի «Թոթուկ», ձեռագիր Մատենադարանի, № 3031, էջ 50—53։